

ՍՈՒՐԲ ՀԱՐՈՒԹՅԱՆ ՏՈՆԸ ՄԱՅՐ ԱԹՈՌՈՒՄ

Ապրիլի 18-ին, շաբաթ.—Ճրագալոյց Զատկի:

Ավագ շաբաթի հոգեպարար և սրտառուչ արարողությունները իրենց հոգևոր վերացման լրումին են հասնում Ավագ շաբաթ օրվա երեկոյան Զատկի ճրագալույցի սրբազան պատարագով:

Այդ նվիրական օրը բազմաթիվ հավատացյալներ գալիս են եկեղեցի՝ հաղորդվելու Քրիստոսի արյանն ու մարմնին, ամրապնդելու իրենց քրիստոնեական հավատքը և ստանալու հոգևոր սնունդ:

Նախորդ տարիների պես Հայաստանյայց Եկեղեցին մեծ ուրախությամբ և հանդիսավորությամբ այս տարի ևս տոնեց Քրիստոսի հրաշափառ Հարության տոնը:

Օրվա մեծ տոնի առթիվ, ժամը 18-ին, Մայր տաճարում տեղի ունեցավ «Ճաշու» և «Երեկոյան» ժամերգություններ:

Հոգևորականաց հանդիսավոր թափորով Մայր տաճար առաջնորդվեց Ամենայն Հայոց Հայրապետը:

Ավագ ս. սեղանի վրա ճրագալույցի ս. պատարագ էր պատուցում Մայր Աթոռի դիվանապետ գերշ. Տ. Ներսես արքեպս. Պոզապալյանը: «Հայր մեր»-ից առաջ սրբազան հայրը օրվա խորհրդի մասին բովանդակալից քարոզ խոսեց.

ՆԵՐՍԵՍ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍԻ ՔԱՐՈԶԸ

«Յանուն Հօր և Որդւոյ և Հոգւոյն Սրբոյ. Ամէն»

«Յարուցեալ Տէր ի գերեզմանէն Միածին որպէս փայլեակ
և լոյս փառաց ծագեալ յաշխարհն, և երկինք և երկիրս ցնծային»:

Շարականագիրը Քրիստոսի հարության նվիրված իր բանաստեղծության մեջ այս ձևով կներկայացնե հարությունը մեր Տիրոջ Հիսուսի Քրիստոսի. «Հարություն առավ Միածին Տեր գերեզմանից, ինչպես փայլակը

ճառագայթեց, և նրա լույսը աշխարհով մեկ լցվեց, և երկինք ու երկիր ցնծացին»:

Անցյալ շաբաթվա ընթացքում, սիրելի հավատացյալներ, մենք քայլ առ քայլ հետևեցինք մեր Տիրոջ՝ Հիսուսի կյանքի վերջին օրերին: Նա Երուսաղեմ մուտք գործց, Տաճարը մաքրեց և սրբեց, նաև ուսուցանելով մեզ, որ մենք Աստուծո տաճարները լինենք: Մեր ներքին մարդը, հոգևոր և մարմնավոր, պետք է մաքրենք: Եվ ապա նա Երուսաղեմում, Վերնատան մեջ, իր աշակերտների հետ Վերջին ընթրեաց մասնակցեցավ: Այնտեղ առավ հացը, բաժանեց նրանց և ասաց. «Առեք, կերեք այս հացը, այս է իմ մարմինս, որ ձեզի համար է տրվում»: Եվ ապա գինու բաժակը առավ, ըմպեց և տվեց իր աշակերտներին, որ խմեն, և ասաց. «Արբեք, խմեցեք սրանից, այս է իմ արյունը, որ թափվում է ձեր մեղքերի քավության համար»: Եվ հետո իր աստվածությունից խոնարհվեց, ծունկի իջավ իր աշակերտների առջև, մեկ առ մեկ նրանց ոտքերը լվաց, իբրև նշան խոնարհության, որ այս կյանքի մեջ հպարտությունը ոչ մեկ արժեք ունի, այլ խոնարհությունն է, որ մեզ բարձրացնում է դեպի աստվածություն: Ինչպես Աստված խոնարհվեց, մարդացավ, աշխարհ եկավ, այդ նույն մարդը՝ Հիսուս, խոնարհվեց և իր աշակերտների ոտքը լվաց: Այդպիսով դաս տվեց նրանց, որպեսզի իրենք ևս կյանքում լինեն հեզ և խոնարհ: Եվ ապա իր աշակերտների հետ Զիթենյաց լեռ գնաց, այնտեղ իր վերջին ժամերը նա աղոթքով Աստուծո հետ կապվեց: Եվ այդ աղոթքի պահին նա զգում էր, թե ինչ է սպասում իրեն. նա գիտեր գալիքը: Եվ գիտեր, թե ինչպես Հուդան երեսուն արծաթով իր Տիրոջը պիտի վաճառեր քահանայապետերին և դպիրներին: Եվ այդպես էլ Հուդան գիշերվա խորքի մեջ քահանայապետերի, դպիրների, ծառաների, փարիսեցիների հետ եկավ Գեթսեմանի պարտեզ, այնտեղ իր Տիրոջը համբույրով մատնեց. «Ընդ որում ես համբուրեսցի, նա է, նմա կալարուք»: «Նրան, որ համբույրով համբուրեմ, նա է, նրան բռնեք»: Հիսուսին տարան քահանայապետի՝ Կայափայի Աննայի առջև, այնտեղ դատապարտելու համար: Եվ նրան դատապարտեցին, որովհետև նա ասում էր, թե Աստուծո Որդին եմ, որովհետև նա ասում էր, թե կարող է Երուսաղեմի Տաճարը քանդել և երեք օրվա մեջ նորից կառուցել: Բայց նրանք չէին հասկանում, թե այդ քանդվող տաճարը ինչ տաճար է, քարեղե՞ն տաճար է, թե՞ ոգեղեն տաճար: Իր անձն է այն տաճարը, որ հետո գերեզման պիտի իջներ երեք օր, սակայն պիտի փառավորվեր հարությամբ: Նրան դատապարտեցին մահվան: Որպեսզի այդ դատապարտությունը իրավացի լիներ, օրինական լիներ, տարան Պիղատոսի մոտ: Պիղատոսը ևս քննեց նրան: Եվ իսկապես նա չկարողացավ ծանր հանցանք գտնել Հիսուսի վրա: Սակայն ժողովուրդն ուզում էր, որ Հիսուս խաչ հանվեր, սպանվեր այդպիսով: Նրանք մեղավորին բանտից ազատեցին, փոխարեն Հիսուսին սպանեցին, որ արդար էր և Աստվածորդին: Մեղքը նախընտրեցին, քան թե արդարությունը և սերը: Եվ որոշում տրվեց՝ Հիսուսին խաչել: Խաչն ուսը դրին, տարին դեպի Գողգոթա, Գողգոթայի բարձունքում խաչելու մեղավորների հետ: Նրան խաչեցին: Այդ պահին արեգակը խավարեցավ, Սողոմոնի Տաճարի վարագույրը վերևից ներքև պատռվեց, բայց մարդիկ այդ բոլորից բան չհասկացան, չանդրադարձան իրենց սխալին: Ապա Հիսուսի մարմինը Հովսեփ Արիմաթացին առավ և մաքուր կտավով պատեց և նորափոր գերեզմանի մեջ թաղեց և դռան առաջը մեծ ժայռ դրեց: Պահակներ նշանակվեցին, որպեսզի հանկարծ Հիսուսի աշակերտները չգային և չգողանային նրա մար-

մինը՝ ասելու համար, թե Հիսուս հարություն առած է: Երբ երրորդ օրը ավարտվեց նրա թաղման, Հիսուսի աշակերտները սպասում էին արտատրոի: Այդ պահին Մարիամ Մագդաղենացին և մյուս Մարիամը գնացին գերեզման, ըստ օրենքի, նրա մարմինը խունկով և զմուռսով պատելու: Զարմացան և ապշած մնացին՝ տեսնելով գերեզմանի հսկա քարը մեկ կողմ գլորված: Եվ երբ վեր նայեցին, տեսան ներսում սպիտակների մեջ Աստուծո հրեշտակը կանգնած: Եվ նրա վարշամակը ծալված, մեկ կողմ դրված էր: Նրանք վախից սարսափած վազեցին Երուսաղեմ, որ շատ մոտ էր Գողգոթային, և կանչեցին Հիսուսի աշակերտներին՝ Պետրոսին և նրան, որ սիրում էր՝ Հովհաննեսին: Եվ նրանք հասան գերեզման, և ինչ զարմանք, Հիսուս այնտեղ չէր, հարություն առած էր: Հրեշտակները այնտեղ կանգնած ավետեցին նրանց, թե «զո՞ փնտրէք զկենդանին ընդ մեռեալս, չէ՞ աստ, քանզի յարեաւ». «Ինչու՞ ապրողը կենդանիների մեջ եք փնտրում, այստեղ չէ, այլ հարություն առավ»:

Ինչ հրաշալի իրականություն է, Աստված մարդացավ, Աստված խոնարհվեց, Աստված մարդկությանը ցույց տվեց երկնքի ճանապարհները, Աստված մատնվեց, Աստված խաչվեց և Աստված մեռավ մարմնով: Բայց երեք օր հետո այդ մարմինը վերընձյուղեցավ, կենդանացավ և հարությամբ փառավորվեց:

Ահավասիկ Աստուծո ամենակատարյալ և գեղեցիկ հրաշքը, որ մեր աչքերի առջև կատարված է, և այդ պատմությունը վկայում է: Եվ այսօր տակավին մարդիկ գտնվում են խավարի մեջ և սպասում են հույսի ճշույլը լուսեղեն, որպեսզի հավատան:

Մենք շատ շուտ դարձանք լույսին: Հայ ժողովուրդն իսկապես շուտով ճանաչեց այդ լույսի իրականությունը, և այդ լույսի պայծառությամբ Հայաստան աշխարհը լուսավորվեց:

Այսօր, սիրելի հավատացյալներ, մենք բոլորս Քրիստոսի հարությամբ հավատում ենք, որ մենք անմահ ենք, նրանք, որոնք աշակերտում են Քրիստոսին, նրանք մահ չպիտի տեսնեն, թեև նրանց ցնցեղեն տաճարը պիտի քայքայվի, հող դառնա, ինչպես հողից է ստեղծված, բայց հոգեղեն տաճարը՝ այն շունչը, այն հավատը, այն սերը և այն հույսը, որ մեր մեջ դրվեց Քրիստոսի քարոզությամբ, այդ բոլորը երբեք չեն կորսվիր, այլ կմնան հավիտյանս մեր կյանքի մեջ:

Տեսնում ենք, գարուն եկավ, սառը ձմեռը նահանջեց, ծառերը ծաղկեցին, բնությունն սկսեց գեղեցկանալ, առվակներն իրենց խոխոջով նոր երգեր սկսեցին երգել, ծիծեռնակները եկան իրենց բույները, թռչունները երամ-երամ տաք երկրներից դեպի հյուսիս են չվում: Այս բոլորը ցույց է տալիս բնության փոփոխությունը, զարթոնքը, նոր կյանքը: Քրիստոս գարնան հետ ինքն ևս հարություն առավ և իր հարությամբ մարդկությանը ցույց տվեց, որ մահը սահման չէ, մահը վերջ չէ մարդու համար, այլ մահվամբ մի նոր դուռ է բացվում մարդկության առջև՝ հավիտենական երջանիկ կյանքի հույսով առլեցուն:

Ինչու՞ մեր ժողովուրդը իր հույսերն է կապում Աստուծո հետ: Ինչու՞ մեր ժողովուրդը իր հույսերն է կապում Հիսուսի հետ: Ինչու՞ մեր ժողովուրդը վասն արդարության, վասն մարդկային իրավամբ, մահը մարդու իրավունքների համար մեծ պայքար է մղում այս օրերին, թեև այսօր թերևս մեր հույսերը տարտամել են, թերևս այսօր հավատքը տկարացել է, թերևս այսօր սերն աշխարհի վրա նվազել է: Այս թերևսների պատճառը մե՛նք պետք

է գտնենք, սիրելի հավատացյալներ: Ամբողջությամբ հոգևին, գիտակցությամբ, էությամբ պետք է քրիստոնեական կրոնքը հասցնենք մեր հոգեղեն կյանքի իրականությանը՝ անսասան մնալով մեզի ավանդված Ս. Գրիգոր Լուսավորչի հավատքի վեմի վրա, առանց տարակուսանքի, առանց տարբեր քարոզություններից շփոթվելու և մանավանդ Հայաստանի մեջ տեղի ունեցող աղանդավորական հոսանքներին առանց ենթարկվելու:

Ճշմարտությունը Հայաստանյայց Սուրբ Եկեղեցին է, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի կաթուղիկե այս տաճարն է, որ հիմնված է Աստվածորդու իջման տեղում: Եվ քանի որ Աստվածորդին իջած է Հայաստան, այդ ցույց է տալիս, թե մենք ճշմարիտ հավատքի հիմքերի վրա ենք կանգնած:

Թող հարուցյալ Փրկիչը մեզ նոր ավյունով զորացնե մեր հավատքի մեջ: Թող հարուցյալ Փրկիչը մեր հավատքի տատանման, կորստյան ճամփաներից մեզ դեպի լուսեղեն ճանապարհ բերի: Նաև մեր բոլոր իդեալներին և երազներին իրականություն պարգևե: Եվ թող մեր հավատքը մեր Տիրոջ՝ Հիսուս Քրիստոսի վրա ծաղկի և պտղաբերի գարնան ծաղկունքի նման: Եվ Աստուծո շնորհքը հարուցյալ Փրկչի միջոցով անպակաս լինի հայ ժողովրդի վրայից այժմ և հավիտյանս հավիտենից. ամեն:

Հավարտ ս. պատարագի Վեհափառ Հայրապետը «Այսօր յարեաւ» շարականի երգեցողությամբ եկեղեցական թափորով առաջնորդվում է Վեհարան, ուր Մայրավանքի միաբանությունը շնորհավորում է Նորին Սրբությանը Քրիստոսի Հարության մեծ տոնի առթիվ:

* * *

Ապրիլի 19-ին, կիրակի.—ԶԱՏԻԿ: Յարութիւն Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի:

Մեծ պահքի քառասնօրյա ապաշխարության, զղջումի և աղոթքի հոգեթով ապրումներից հետո, մեր Տիրոջ՝ Հիսուս Քրիստոսի հրաշափառ Հարությամբ հավատավոր հոգիներն ավելի զորացան և գոտեպնդվեցին՝ փրկության հույսով:

Զատկական տոնը, գարնանային վերազարթոնքի գեղեցիկ շնչով, ավելի մեծ ուրախություն և բերկրանք է հաղորդում ժողովրդին:

Վաղ առավոտից բազմաթիվ հավատացյալներ և ուխտավորներ Մայր Հայրենիքից և Սփյուռքից գալիս են Ս. Էջմիածին՝ մեկ անգամ ևս լսելու բերկրալի ավետիսը՝ «Քրիստոս յարեաւ ի մեռելոց»:

Օրվա մեծ տոնի առիթով, տոնական ժամերգությունից հետո, Վեհափառ Հայրապետը զգեստավորված, եկեղեցական շքեղ թափորով, հընթացս օրհնելով հավատացյալ բազմությանը, առաջնորդվում է Մայր տաճար՝ մատուցելու օրվա հանդիսավոր ս. պատարագը:

Մայր տաճարի երգչախմբի կատարմամբ հնչում է «Կոմիտասյան պատարագ»:

Ավագ ս. սեղանի առաջ, ատյանում, ս. պատարագին ներկա էին Հայաստանի Հանրապետության նախագահ տիար Լևոն Տեր-Պետրոսյանը, Խորհրդարանի նախագահ տիար Բաբկեն Արարքցյանը և պաշտոնական այլ անձինք:

«Հայր մեր»-ից առաջ Վեհափառ Հայրապետը, հավատացյալներին ա-

վերելով Քրիստոսի Հարության ուրախալի լուրը, ոգեշունչ քարոզ խոսեց (տես էջ 3):

Հավարտ պատարագի Հայոց Հայրապետը կրկին հոգևորականաց հանդիսավոր թափորով առաջնորդվում է Վեհարան, ուր թափորի մասնակիցները աջահամբույրով շնորհավորում են Նորին Սրբությանը զատկական տոնի առթիվ:

Այս տոնական առիթով Վեհափառ Հայրապետի կողմից Վեհարանի սեղանատանը պաշտոնական ճաշկերույթ տրվեց, որին մասնակցում էին Մայրավանքի միաբանությունը, Գերագույն Հոգևոր Խորհրդի անդամները, Մայր Աթոռի պաշտոնեությունը:

Ճաշկերույթին հրավիրված էին Հայաստանի Հանրապետության նախագահ տիար Լևոն Տեր-Պետրոսյանը, Խորհրդարանի նախագահ տիար Բաբկեն Արարքցյանը և հայրենի կառավարության պաշտոնատար այլ անձինք:

Զատկական սեղանի շուրջ փոխանակվեցին շնորհավորանքի ջերմ խոսքեր:

Վերջում Վեհափառ Հայրապետը ներկաներին շնորհավորեց Քրիստոսի Հարության մեծ տոնի առիթով և իր օրհնությունը բաշխեց բոլորին: